ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 129-Ա
31 ՕԳՈՍՏՈՍ 2021Թ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալի օգնական Աշխեն Հայրապետյանի հետ կնքած 2021 թվականի օգոստոսի 31-ի N 441/1 համաձայնագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի հունվարի 19-ի «ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի 2021 թվականի հաստիքացուցակը հաստատելու մասին» N 6 որոշմամբ հատատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.
   1.1 «Հայեցողական և քաղաքացիական պաշտոններ» բաժնի 9-րդ կետում «մարզպետի տեղակալի օգնական» բառերից հետո ավելացնել «(4 ժամ)» բառերը:
   1.2 «Հայեցողական և քաղաքացիական պաշտոններ» բաժնում ավելացնել՝ նոր 10-րդ կետ՝ «10. մարզպետի տեղակալի օգնական (4 ժամ)»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի սեպտեմբերի 1-ից:

9/1/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550